

**ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանը մասնակցել է Վազգեն Սարգսյանի ծննդյան հիշատակին նվիրված միջոցառմանը**

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանը մարտի 5-ին Կապանի թիվ 13 հիմնական դպրոցում մասնակցել է ՀՀ պետական-քաղաքական գործիչ, Հայաստանի ազգային հերոս, Արցախի հերոս Վազգեն Սարգսյանի 56-ամյակին նվիրված միջոցառմանը:

Վ. Դավթյանը նախ ծաղիկներ է դրել Սպարապետի նկարի կողքին, այնուհետև ներկա գտնվել դպրոցի «Պատանի երկրապահ» ակումբի սաների «Արժիվները չեն պարտվում» խորագիրը կրող միջոցառմանը:

Վ. Դավթյանը շնորհավորելով Վազգեն Սարգսյանի տարեդարձը, խոսել է ազատագրական պայքարում նրա մեծ ներդրման մասին, արժևորել նրա դերը հայոց բանակի կազմավորման գործում, ինչպես նաև նշել, որ պատանի երկրապահները պետք է պատվով շարունակեն Սպարապետի գործը:

